

կամ է նաև *Խաչիկ Լեւոնեան* Բիւզանդիոն լրագիրին մէջ (1903ին թ. 931)։ Դժբախտաբար ո՛չ Հ. Զարբհանէլեան և ո՛չ ալ *Խաչիկ Լեւոնեան* նշանակած են, թէ ո՛ւր գտած են այս յիշատակարանը։

Հ. Զարբհանէլեան անորոշ կերպով «յիշատակարան» մը կ'ըսէ ու կ'անցնի, իսկ *Լեւոնեան* տարեգրութեան մը վրայ խօսած ատեն՝ անկէ «անկախ կերպով, կ'ըսէ. հետեւեալը կայ գրուած, որ ՕՐԻՆԱԿ-ԻԱՄ Է ՄԱԳԱԴԱԹԻ ՄԸ ՎՐԱՅԷՆ»։ Թէ այդ մագաղաթը ո՛ւր պահուած է, գիրքի մը մաս կը կազմէ՝ թէ անջատ հատկոտոր մըն է, այս մասին ոեւէ տեղեկութիւն չէ տրուած։ Սակայն ծանօթ ըլլալով, որ *Խաչիկ Լեւոնեան* այդ միջոցին կը գտնուէր Վան, կրնանք ենթադրել թէ մագաղաթն ալ անդ կամ շըրջակայքը ըլլալու էր։

Իսկ Հ. Զարբհանէլեանի աղբիւրը բոլորովին անծանօթ կը մնայ։ Այս ձեւով կ'ուշնենանք երեք տարբեր օրինակները միեւնոյն յիշատակարանին, որուն մեզ շահագրգռող մասը կը ներկայացնենք իր կարեւոր տարբերակներով, հիմ ունենալով Գրիգոր Յ. Ա. Ռամիկոնեանի անդրանիկ հրատարակութիւնը (երկրորդական և անկարեւոր տարբերութիւնները չենք նշանակած)։

Ամէն պարագայի, յիշատակարաններու միջև տեսնուած տարբերութիւնները ընդօրինակութեան ատեն կատարուած լեզուական փոփոխութիւններ են և ոչ իմաստի։

Ահա այդ յիշատակարանը.

«Ի բուին Հայոց ԹՃԼԲ Փետրվար ամսոյ Բ. աւուրն ես Բաղիբեցի մահեստի Շահ Մուրասս, գնացի